ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.09.2019
343-08

ՀՀ Արարատի մարզպետ
Գարիկ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայքի «Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն. գրել առցանց նամակ» բաժնում տեղադրված է Էլեկտրոնային հարցումների միասնական e-request հարթակի հղումը: Հղմանը նախորդող տեքստում որպես ի գիտություն նշվում է. «Հարգելի այցելու, կայքի միջոցով ուղարկված Էլեկտրոնային նամակները չեն կարող համարվել պաշտոնական, դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն և ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության»:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տեղեկացնել, թե ինչ իրավական հիմքով է մարզպետարանը հրաժարվում էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունը համարել պաշտոնական, այն դեպքում, երբ Կառավարության 2015 թվականի 1204-Ն որոշման համաձայն՝ Էլեկտրոնային դիմումը, հարցումը կամ բողոքը պետ է պարտադիր կարգով քննության առնվի:

Միաժամանակ հստակ չէ, թե ինչ հիմքով եք հրաժարվում Կառավարության կողմից գործարկված էկետրոնային հարցումների միասնական e-request հարթակի միջոցով ուղարկված էլեկտրոնային հարցումները համարել պաշտոնական, եթե, ըստ Կառավարության որդեգրած քաղաքականության, պետական կառավարման մարմինների համար վերոնշյալ հարթակով ստացված հարցումները համարվում են պաշտոնական և ենթակա են պարտադիր արձագանքի օրենքով նախատեսված ժամկետներում:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան